ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

# <<ՀՀՏՄ-ԲՄԽԾՁԲ-25/02>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Իջևան

<< 13 >> հոկտեմբերի 2025թ.
ժամը 10:00

**Մասնակցում էին.**

Միսակ Մելքումյան - Հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

**Անդամներ՝** Աղաբեկ Գալստյան-Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Արտակ Սարգսյան- Հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Սիրանուշ Չիբուխչյան- Հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Աննա Մանգասարյան-Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

<< ՀՀՏՄ-ԲՄԽԾՁԲ-25/02>> ծածկագրով " ՀՀ Տավուշի մարզի Լուսաձորի կրթահամալիր տանող Տ-10-25 /Մ-4/ - Լուսաձոր կմ0+000-կմ1+500 մարզային նշանակության ավտոճանապարհի միջին նորոգման աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների " ձեռքբերման ընթացակարգի մրցույթի հայտերը բացվել են 06.10.2025թ. ժամը 14:00-ին՝ էլեկտրոնային արմեպս համակարգով:

1. Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | ՀՎՀՀ | Չափաբաժնի համարը | Գնային առաջարկ առանց ԱԱՀ | Ներկայացված գնային առաջարկը, ներառյալ ԱԱՀ | Նախահաշվային արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԷԴ ԱՐՏ ՊՐՈԵԿՏ ՍՊԸ | 00510976 | 1 | *1000000* | *1000000/մեկ միլիոն/* | -Գնումների մասին ՀՀ օրենքի 15/6/1 |
| 2 | Ճանապարհային նախագծային ինստիտուտ ՍՊԸ | 00813453 | 1 | 1666500 | 1999800/մեկ միլիոն ինը հարյուր իննսունինը | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | հազար ութ հարյուր/ | |
| 3 | ԻՆՖՐԱ ԴԻԶԱՅՆ ՍՊԸ | 00490182 | 1 | 1500000 | 1500000/մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ | |

2. Հրավերով սահմանված ոչ գնային պայմանները գնահատվում են բավարար:

*Ելնելով ՀՀՏՄ-ԲՄԽԾՁԲ-25/02 ծածկագրով մրցույթին ներկայացված հայտերի գնահատման արդյունքներից և հիմք ընդունելով օրենսդրության պահանջները գնահատող հանձնաժողովն ընդունեց հետևյալ որոշումները.*

1. Մրցույթի ընտրված մասնակից է համարվում ոչ գնային պահանջները բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ԷԴ ԱՐՏ ՊՐՈԵԿՏ ՍՊԸ-ն, մյուս մասնակիցները համարվում են չընտրված:
2. Անգործության ժամկետ է կիրառվում 10 օրացուցային օր:
3. Անգործության ժամկետի ավարտից հետո՝ 4-րդ աշխատանքային օրը մասնակցին կծանուցվի պայմանագիր կնքելու վերաբերյալ:
4. Սույն արձանագրության պատճենը տրամադրել բոլոր մասնակիցներին:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Մելքումյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գալստյան

Ա. Սարգսյան

Ս. Չիբուխչյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանգասարյան